




Երեխաներու հետ
փիլիսոփայելու համար
գաղափարներ՝

#գեղեցկութիւն



փիլիպարտէլ




Առարկայ մը ցոյց տուէք:

Օրինակ՝ ծաղիկ մը,
նկար մը, տեսարան մը,
քար մը, եւայլն...:

Յետոյ հարցուցէք՝
«Ասիկա գեղեցիկ է:»





Հարցուցէք այսպէս
ու նման այլ հարցումներ...



Ինչո՞ւ գեղեցիկ/տգեղ գտար
այս բանը: Ըստ քեզի, ի՞նչ է
անիկա գեղեցիկ/տգեղ
դարձնողը:



Այդ յատկութիւնը որ անհկա
գեղեցիկ/տգեղ կը դարձնէ,
ամէն ինչը

կը գեղեցկացնէ/տգեղացնէ:

Օրինակ՝ եթէ գեղեցիկ
դարձնողը գոյնն է,

այս գոյնը ունեցող ամէն ինչ
գեղեցիկ/տգեղ է:

Այս բանը ամեն մարդ
գեղեցիկ/տգեղ կը գտնէ՞:

Բան մը կայ որ ուրիշներու
համար գեղեցիկ է բայց քեզի
համար գեղեցիկ չէ: Ի՞նչ կրնայ
ըլլալ այս տարբերութեան
պատճառը:



Օրինակ կրնա՞ս տալ բանի մը
որ ամէն մարդ կը հաւնի:
Եթէ կան այսպէս բաներ՝
անոնց միջեւ որեւէ
հասարակաց կէտ մը կը
գտնուի՞:



Գեղեցկությունը առարկային
պատկանող յատկություն է,
թե՛ մեկնաբանող անձերեն
կախեալ է:






Գեղեցկութիւնը չափանիշ մը
ունի, թէ՛ չունի:

Փորձէնք սահմանել...
Ի՞նչ է գեղեցկութիւնը:

Մի մոռնաք որ
երեխաներու հետ
փիլիսոփայելու նպատակը
«ճիշդ պատասխան»ը
փնտռել չէ, այլ՝ վարժեցնել է
ճիշդ ձեռով միտք բանեցնելու:





Նման աշխատանքներու
համար կրնաք այցելել
փիլիպարտէլին
կայքէջը:

